3.9. 9-րդ վանդակում նշվում են այն տեղեկությունները, որոնք մաքսային մարմինը պետք է ընդունի ի գիտություն այն ապրանքի մաքսային հայտարարագրման ժամանակ, որի վերաբերյալ կայացվել է նախնական որոշումը (Մաքսային միության անդամ պետությունների գործադիր իշխանության լիազոր մարմինների՝ ներմուծվող ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող թույլատրագրերը եւ այլ փաստաթղթեր, ինչպես նաեւ ապրանքի հայտարարագրման ժամանակ սույն որոշումը կիրառելու պայմանները հստակեցնող տեղեկությունները)։

3.10. 10-րդ վանդակում դրվում է մաքսային մարմնի ղեկավարի (ղեկավարի տեղակալի) ստորագրությունը՝ նշելով պաշտոնը, ազգանունը եւ անվան սկզբնատառերը:

Հաստատված է

Մաքսային միության հանձնաժողովի 2010
թվականի մայիսի 20-ի թիվ 260 որոշմամբ

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի տրամադրման եւ օգտագործման կարգը

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի տրամադրման եւ օգտագործման սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) կիրառվում է միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը (ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները, կցորդները, կիսակցորդները, բեռնարկղերը) մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու դեպքում:

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները (ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները, կցորդները, կիսակցորդները, բեռնարկղերը) մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար նախօրոք թույլատրումն իրականացվում է «ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման մասին» 1975 թվականի նոյեմբերի 14-ի մաքսային կոնվենցիայով կամ «Բեռնարկղերի մասին» 1972 թվականի դեկտեմբերի 2 -ի մաքսային կոնվենցիայով սահմանված տեխնիկական պահանջներին դրանց կառուցվածքների համապատասխանության դեպքում:

2. Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին որոշումը կայացնում է ուղարկող մաքսային մարմինը՝ շահագրգիռ անձի կողմից ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը վերջինիս դատարկ վիճակում տեսազննման համար ներկայացնելու դեպքում, եթե դրանք մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար նախօրոք թույլատրված չեն եղել:

Տվյալ որոշումն ուղարկող մաքսային մարմնի կողմից կայացվում է առանց միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի (այսուհետ՝ թույլատրելու մասին հավաստագիր) տրամադրման, տարանցիկ փոխադրման հայտարարագրում «Մեկանգամյա թույլտվություն» գրառում կատարելու եղանակով եւ գործում է նախքան «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի եզրափակումը՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի բեռնատար հատվածամասի ամբողջականության խախտման բացակայության դեպքում:

3. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները (ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները, կցորդները, կիսակցորդները, բեռնարկղերը) մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար նախօրոք կարող են թույլատրվել՝

3.1. անհատական կարգով.

3.2. ըստ տրանսպորտային միջոցի կառուցվածքի տեսակի (սերիաների):

ԳԼՈՒԽ 2

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԻՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
(ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿՑՈՐԴՆԵՐԸ,
ԿԻՍԱԿՑՈՐԴՆԵՐԸ) ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ՈՒ ԿՆԻՔՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՄԲ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԻՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ
ՆԱԽՕՐՈՔ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԸ

4. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը (ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը) մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար անհատական կարգով նախօրոք թույլատրելու համար դրա սեփականատերը կամ տիրապետողն ազատ ձեռով կազմված համապատասխան դիմումը ներկայացնում է այն մաքսային մարմին, որի գործունեության գոտում (տարածքում) նա գտնվում է կամ մշտական հիմունքներով բնակվում, եւ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը ներկայացնում է դատարկ վիճակում տեսազննման համար:

5. Սույն դրույթի 4-րդ կետում նշված դիմումին կցվում են՝

թույլատրելու մասին հավաստագրի ձեւաթղթի երկու օրինակ՝ սույն Կարգի 1-ին հավելվածում ներկայացված ձեռով եւ այդ ձեւաթղթերի 1-6-րդ վանդակները լրացված.

գծագրերը, լուսանկարները եւ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի կառուցվածքի մանրամասն նկարագրությունը.

ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի նկատմամբ սեփականության իրավունքը, տնտեսավարման իրավունքը, օպերատիվ կառավարման կամ տիրապետման իրավունքը հաստատող փաստաթղթերի բնօրինակները եւ լուսապատճենները.

ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի գրանցման հավաստագրի բնօրինակը եւ լուսապատճենը.

ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջազգային փոխադրումների իրականացման բնագավառում ավտոմոբիլային, ներքին ջրային, ծովային տրանսպորտով ուղեւորների եւ բեռների փոխադրում (բացառությամբ ուղեւորների եւ բեռների՝ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից սեփական կարիքների համար իրականացվող տեխնոլոգիական, ներտնտեսական, փոխադրումների) իրականացնելու հատուկ թույլտվության (լիցենզիայի) բնօրինակը եւ պատճենը, եթե դրանց տրամադրումը նախատեսված է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

Թույլատրելու մասին հավաստագրին կից ներկայացվող լուսանկարներում կամ գծագրերում պետք է պատկերված լինի ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի արտաքին տեսքը՝ առջեւից, ետեւից, ձախ եւ աջ կողմերից, ինչպես նաեւ մաքսային կապարակնիքներ ու կնիքներ դնելու տեղերը: Մեկ լուսանկարում կամ գծագրում թույլատրվում է ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի ոչ ավելի, քան երկու տեսակի միաժամանակ պատկերումը:

Դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվում է այն սահմանված կարգով ստանալու օրը: Դիմումը գրանցելիս իրականացվում է բնօրինակներին փաստաթղթերի լուսապատճենների համապատասխանության ստուգում, որի մասին համապատասխան նշում է կատարվում փաստաթղթերի պատճենների վրա: Ստուգում իրականացնելուց հետո ներկայացված փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են դիմումատուին:

6. Մաքսային մարմինը դիմումը գրանցելուց հետո իրականացնում է ներկայացված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի տեսազննում եւ սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ հիշատակված տեխնիկական պահանջներին դրանց համապատասխանության դեպքում տրամադրում է թույլատրելու մասին հավաստագիր: Ընդ որում, մաքսային մարմինը թույլատրելու մասին հավաստագրի երկու ձեւաթղթերում լրացնում է «Ում կողմից է

տրված» վանդակը, ինչպես նաև 7-րդ վանդակը եւ նշում է թույլատրելու մասին հավաստագրի համարը:

Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի՝ սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ սահմանված տեխնիկական պահանջներին անհամապատասխանության դեպքում, մաքսային մարմինը դիմումը գրանցելուց հետո՝ երեք աշխատանքային օրվանից ոչ ուշ, դիմումատուին գրավոր հայտնում է այն պատճառների մասին, որոնցով պայմանավորված՝ թույլատրելու մասին հավաստագիր չի կարող տրվել:

ԳԼՈՒԽ 3

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
(ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿՑՈՐԴՆԵՐԸ,
ԿԻՍԱԿՑՈՐԴՆԵՐԸ) ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ՈՒ ԿՆԻՔՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՄԲ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՍՏ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՏԵՍԱԿԻ (ՍԵՐԻԱՆԵՐԻ) ՆԱԽՕՐՈՔ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԸ

7. Եթե միեւնույն կառուցվածքի տեսակը (սերիան) ունեցող ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները, կցորդները, կիսակցորդները պատրաստվում են սերիականորեն, ապա պատրաստողն ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները, կցորդները, կիսակցորդները մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար ըստ տրանսպորտային միջոցի կառուցվածքի տեսակի (սերիայի) նախօրոք թույլատրելու համար ազատ ձեռով շարադրված դիմումը ներկայացնում է այն մաքսային մարմին, որի գործունեության գոտում (տարածքում) նա գտնվում է, ինչպես նաև այդ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներից, կցորդներից, կիսակցորդներից մեկը ներկայացնում է դատարկ վիճակում տեսազննման համար:

8. Դիմումի մեջ նշվում է ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի տեսակը, հատկանիշները եւ այն տարբերակիչ թվերը կամ տառերը,

որոնք պատրաստողը տալիս է մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար նախօրոք թույլատրություն ստանալու ենթակա ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի կառուցվածքի տեսակին (սերիային):

Դիմումի մեջ պատրաստողը գրավոր պարտավորվում է՝

ստեղծել պայմաններ, որոնք թույլ կտան մաքսային մարմնին տվյալ կառուցվածքի տեսակը (սերիան) ունեցող ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների, կցորդների, կիսակցորդների սերիական արտադրության ժամանակ՝ ցանկացած պահի, իրականացնել դրանց տեսազննումը.

կառուցվածքի (սերիայի) գծագրերի եւ նկարագրությունների հետ կապված ցանկացած փոփոխության մասին մաքսային մարմնին տեղեկացնել նախքան այդ փոփոխությունների կատարումը.

ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների, կցորդների, կիսակցորդների վրա՝ տեսանելի վայրում, դրոշմել կառուցվածքի (սերիայի) տարբերակիչ թվերն ու տառերը, ինչպես նաեւ տվյալ կառուցվածքը (սերիան) ունեցող եւ ըստ սերիայի բաց թողնվող յուրաքանչյուր ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի տարբերակիչ կամ գործարանային համարը.

կատարել թույլատրված կառուցվածքին (սերիային) համապատասխան պատրաստված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների, կցորդների, կիսակցորդների հաշվառում:

9. Դիմումին կից ներկայացվում են՝

թույլատրելու մասին հավաստագրի ձեւաթղթի երկու օրինակ՝ սույն Կարգի 1-ին հավելվածում ներկայացված ձեւով եւ այդ ձեւաթղթերի 2-4-րդ եւ 8-րդ վանդակները լրացված.

մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար նախօրոք թույլատրություն ստանալու ենթակա

ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի կառուցվածքի տեսակի (սերիայի) գծագրերը, լուսանկարները եւ մանրամասն նկարագրությունը:

10. Դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվում է այն սահմանված կարգով ստանալու օրը:

11. Ըստ ներկայացված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի կառուցվածքի տեսակի (սերիայի) տրվող թույլատրելու մասին հավաստագիրը տրամադրվում է սույն Կարգի 6-րդ կետին համապատասխան:

Մաքսային մարմինն այդ կառուցվածքի տեսակը (սերիան) ունեցող մյուս ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների, կցորդների, կիսակցորդների համար թույլատրելու մասին հավաստագիրը տրամադրում է պատրաստողի կողմից թույլատրելու մասին հավաստագրի՝ 2-4-րդ եւ 8-րդ լրացված վանդակներով ձեւաթղթերը ներկայացվելուն պես, ոչ ուշ, քան մաքսային մարմին նշված ձեւաթղթերի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրը:

12. Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները, կցորդները, կիսակցորդները մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար նախօրոք՝ թույլատրելու պահին, թույլատրելու մասին հավաստագրում նշվելիք տեղեկությունների բացակայության դեպքում թույլատրելու մասին հավաստագրում այդ տեղեկություններն ավելացվում են նշված տրանսպորտային միջոցների պատրաստողի, սեփականատիրոջ կամ տիրապետողի կողմից՝ նախքան մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար դրանց օգտագործումը:

ԳԼՈՒԽ 4

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑԸ (ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ, ԿՑՈՐԴԸ,
ԿԻՍԱԿՑՈՐԴԸ) ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ՈՒ ԿՆԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

13. Թույլատրելու մասին հավաստագիրը ձեւակերպվում է երկու օրինակից, որոնցից մեկը մնում է ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի սեփականատիրոջ կամ տիրապետողի կամ էլ պատրաստողի մոտ, իսկ մյուսը պետք է ուղեկցի ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը:

14. Նշված թույլատրելու մասին հավաստագիրը տրամադրող մաքսային մարմինը թույլատրելու մասին հավաստագրին, որի ձեւը սահմանվում է մաքսային մարմնի կողմից, տալիս է հերթական համար՝ ըստ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրերի գրանցամատյանի:

Թույլատրելու մասին հավաստագրի 7-րդ վանդակում նշվում է այն ամսաթիվը, որի ընթացքում միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը նախօրոք թույլատրվում է մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար, ինչպես նաեւ թույլատրման տեսակը, վայրը եւ ամսաթիվը:

Նշված տեղեկությունները վավերացվում են թույլատրելու մասին հավաստագիրը տրամադրած մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ մաքսային մարմնի կնիքով:

15. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցն անհատական կարգով թույլատրելու դեպքում թույլատրելու մասին հավաստագրին կցվում են լուսանկարներ, անհրաժեշտության դեպքում՝ ավտոմոբիլային

տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի արտաքին տեսքը՝ առջեւից, ետեւից, ձախ եւ աջ կողմերից, ինչպես նաեւ մաքսային կապարակնիքներ ու կնիքներ դնելու տեղերը պատկերող նկարներ: Մեկ լուսանկարում կամ գծագրում թույլատրվում է ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի ոչ ավելի, քան երկու տեսակի միաժամանակ պատկերումը:

Լուսանկարների եւ նկարների թիվը նշվում է թույլատրելու մասին հավաստագրի 6-րդ վանդակում: Կցվող յուրաքանչյուր լուսանկար եւ նկար վավերացվում են ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի տեսազննումն իրականացրած մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքով:

16. Այն դեպքում, երբ մաքսային օրենսդրության պահանջները պահպանելու նպատակով անհրաժեշտ է դնել ավելի քան մեկ մաքսային կապարակնիք կամ կնիք, թույլատրելու մասին հավաստագրի 5-րդ վանդակում նշվում են այդ կապարակնիքների կամ կնիքների թիվը եւ դրանք դնելու տեղերը: Ընդ որում, շահագրգիռ անձը թույլատրելու մասին հավաստագրին պարտադիր կարգով պետք է կցի լուսանկարներ եւ անհրաժեշտության դեպքում՝ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի նկարներ՝ կապարակնիքների կամ կնիքների դասավորության ճշգրիտ սխեմայով: Յուրաքանչյուր լուսանկար կամ նկար մաքսային մարմնի կողմից վավերացվում է սույն Կարգի 15-րդ կետով սահմանված կարգով:

17. Սույն Կարգով սահմանված տեխնիկական պահանջներին ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների, կցորդների, կիսակցորդների համապատասխանության ստուգման եւ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար նախօրոք թույլատրման գործողության ժամկետը երկարաձգելու համար ամեն երկու տարին մեկ դրանք ներկայացվում են այն մաքսային մարմին, որի գործունեության գոտում (տարածքում) գտնվում կամ մշտական հիմունքներով բնակվում է ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների, կցորդների, կիսակցորդների սեփականատերը կամ տիրապետողը:

18. Մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ եւ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի օգտագործմամբ ապրանքների փոխադրման անհրաժեշտության դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձինք ստուգում են թույլատրելու մասին հավաստագրի առկայությունը, դրանցում նշված տեղեկությունների արժանահավատությունը, ինչպես նաեւ իրականացնում են յուրաքանչյուր ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի տեսազննում՝ սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ հիշատակված տեխնիկական պահանջներին համապատասխանության մասով:

19. Երբ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը չեն համապատասխանում սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ հիշատակված տեխնիկական պահանջներին, ապա այդ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը պետք է բերվեն տեխնիկական այդ պահանջները բավարարող վիճակի՝ նախքան մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար դրանց օգտագործումը:

20. Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի կառուցվածքի փոփոխության դեպքում թույլատրելու մասին հավաստագիրը չեղյալ է ճանաչվում՝ դրա վրա «ԶԵՂՅԱԼ Է ՃԱՆԱԶՎԵԼ» դրոշմակնիքը դնելու եւ չեղյալ ճանաչելու ամսաթիվը նշելու եղանակով: Նշված դրոշմակնիքը վավերացվում է մաքսային մարմնի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքով:

21. Մաքսային մարմինը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցի, կցորդի, կիսակցորդի՝ սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ հիշատակված տեխնիկական պահանջներին անհամապատասխանությունը հայտնաբերելու դեպքում թույլատրելու մասին հավաստագրի 10-րդ վանդակում համապատասխան գրառում է կատարում հայտնաբերված անսարքությունների մասին: Այդ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը, նախքան մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար դրանց օգտագործումը, պետք է հնարավորինս կարճ ժամկետում բերվեն անհրաժեշտ վիճակի: Այդ ավտոմոբիլային

տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը վերանորոգումից հետո սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ հիշատակված տեխնիկական պահանջները բավարարող վիճակի բերվելուց հետո պետք է ներկայացվեն մաքսային մարմին, որը վերականգնում է միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար նախօրոք թույլատրելու գործողությունը՝ թույլատրելու մասին հավաստագրի 11-րդ վանդակում նախորդ գրառումը չեղյալ ճանաչող համապատասխան գրառում կատարելու եղանակով :

Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցը, կցորդը, կիսակցորդը, որոնց թույլատրելու մասին հավաստագրի 10-րդ վանդակում կատարված է դրանց անսարքությունների մասին գրառում, չեն կարող օգտագործվել մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար, քանի դեռ չի իրականացվել դրանց համապատասխան վերանորոգումը եւ չեղյալ չի ճանաչվել թույլատրելու մասին հավաստագրի 10-րդ վանդակում կատարված գրառումը:

22. Թույլատրելու մասին հավաստագրի 10 -րդ եւ 11-րդ վանդակներում կատարվող գրառումները պետք է վավերացվեն մաքսային մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքով՝ դրանք դնելու ամսաթվի նշմամբ:

ԳԼՈՒԽ 5

ԲԵՌՆԱՐԿՂԵՐԸ, ԸՍՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵՍԱԿԻ (ՍԵՐԻԱՆԵՐԻ), ՄԱՔՍԱՅԻՆ
ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ԵՎ ԿՆԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՕՐՈՔ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԸ

23. Բեռնարկղերի՝ մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար ըստ բեռնարկղերի կառուցվածքի տեսակի (սերիաների) նախօրոք թույլատրումն իրականացվում է սույն Կարգի 7-10-րդ

կետերին համապատասխան՝ սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները հաշվի առնելով:

24. Եթե մաքսային մարմինը հավաստիանում է, որ բեռնարկերը համապատասխանում են սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ հիշատակված տեխնիկական պահանջներին, ապա նա թույլատրելու մասին հավաստագիրը տրամադրում է սույն Կարգի 2-րդ հավելվածում ներկայացված ձեռով:

25. Բեռնարկերը մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագիրը ձեւակերպվում է թույլատրելու մասին նշված հավաստագիրը տրամադրող մաքսային մարմնի կողմից՝ երկու օրինակից, որոնցից մեկը մնում է մաքսային մարմնի մոտ, իսկ մյուսը տրամադրվում է դիմումատուին: Բեռնարկերը մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագիրը վավերացվում է մաքսային մարմնի ղեկավարի ստորագրությամբ եւ այդ մաքսային մարմնի կնիքով:

26. Թույլատրելու մասին հավաստագիրը վավեր է համարվում այն բեռնարկերի համար, որոնք թույլատրվել են մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար:

27. Նախքան մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ եւ բեռնարկերի օգտագործմամբ ապրանքների փոխադրումը՝ բեռնարկերի սեփականատերը կամ տիրապետողը մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրված բեռնարկերին պետք է փակցնի բեռնարկը մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին ցուցանակ (այսուհետ՝ թույլատրելու մասին ցուցանակ)՝ սույն Կարգի 3-րդ հավելվածով սահմանված ձեռով:

28. Թույլատրելու մասին ցուցանակը պետք է ամուր փակցվի տեսանելի վայրում՝ պաշտոնական նպատակներով տրամադրված ցանկացած այլ ցուցանակի կողքին:

29. Թույլատրելու մասին ցուցանակը 10 x 20 սմ –ից ոչ ավելի չափսով մետաղական թիթեղ է: Դրա մակերեսի վրա պետք է հատիչով փորագրված, բարձրաքանդակի ձևով դրոշմված կամ ցանկացած այլ եղանակով հստակ եւ ամուր դաջված լինեն ներքոնշյալ գրությունները՝

«ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ Է ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ԵՎ ԿՆԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ» գրությունը անգլերենով՝ «APPROVED FOR TRANSPORT UNDER CUSTOMS SEAL» և ֆրանսերենով՝ «AGREE POUR LE TRANSPORT SOUS SCHEMEMENT DOUANIER».

Թույլատրման երկրի ամբողջական անվանումը, այդ թվում՝ անգլերենով կամ ֆրանսերենով, կամ դրանց երկնիշ տառային ծածկագրերը, թույլատրելու մասին հավաստագրի համարը եւ թույլատրման տարեթիվը: Բեռնարկղերը մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին ցուցանակների համար թույլատրելու մասին հավաստագրի համարը կազմվում է հետեւյալ կերպ՝ առաջին երկու թվերը բեռնարկղերը մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագիրը տրամադրած մաքսային մարմնի ծածկագիրն են, հաջորդ թվերը, որոնք առանձնացված են առաջին երկու թվերից, թույլատրելու մասին հավաստագրի հերթական համարն են.

բեռնարկղի՝ պատրաստողի կողմից տրված տարբերակիչ կամ գործարանային համարը:

Եթե բեռնարկղը, ըստ կառուցվածքի տեսակի (սերիաների), թույլատրվել է մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար, ապա թույլատրելու մասին ցուցանակի վրա պետք է դրոշմված լինեն նաեւ բեռնարկղի տվյալ տեսակի տարբերակիչ թվերը կամ տառերը:

30. Մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ եւ բեռնարկղերի օգտագործմամբ ապրանքների փոխադրման անհրաժեշտության դեպքում մաքսային մարմնի պաշտոնատար անձինք ստուգում են թույլատրելու մասին ցուցանակների առկայությունը, դրանցում նշված տեղեկությունների արժանահավատությունը, ինչպես նաեւ իրականացնում են բեռնարկղերի արտաքին տեսազննում՝ սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ հիշատակված տեխնիկական պահանջներին համապատասխանության մասով:

31. Երբ բեռնարկղը չի համապատասխանում սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ հիշատակված տեխնիկական պահանջներին, այն պետք է բերվի տեխնիկական նշված պահանջները բավարարող վիճակի՝ նախքան մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար դրա օգտագործումը:

32. Այն դեպքում, երբ բեռնարկղերը թույլատրելու համար դիմումը չի ներկայացվել արտադրության փուլում, բեռնարկղի սեփականատերը կամ տիրապետողը կարող է դիմել այն մաքսային մարմին, որի գործունեության գոտում (տարածքում) նա գտնվում կամ մշտական հիմունքներով բնակվում է, եւ բեռնարկղը ներկայացնի դատարկ վիճակում տեսազննման համար:

Թույլատրելու մասին ցանկացած դիմում պետք է պարունակի պատրաստող գործարանի կողմից յուրաքանչյուր բեռնարկղի վրա նշված հերթական համարը (գործարանային համարը):

Եթե մաքսային մարմինը հավաստիանում է, որ բեռնարկղը բավարարում է սույն Կարգի 1-ին կետի 2-րդ պարբերության մեջ հիշատակված տեխնիկական պահանջները, ապա նա թույլատրելու մասին հավաստագիրը տրամադրում է սույն Կարգի 4-րդ հավելվածում ներկայացված ձեւով: Այդ հավաստագիրը, որում նշված է պատրաստող գործարանի կողմից այն բեռնարկղին տրված հերթական համարը, որի համար այն տրամադրված է, դիմում ներկայացրած ձեռնարկությանը իրավունք է տալիս մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրված բեռնարկղի վրա փակցնել թույլատրելու մասին ցուցանակ՝ սույն Կարգի 3-րդ հավելվածով սահմանված ձեւով:

Հավելված 1

Միջազգային փոխադրում իրականացնող
տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների
ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման
համար թույլատրելու մասին հավաստագրի տրամադրման
եւ օգտագործման կարգի

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային
կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար
թույլատրելու մասին հավաստագրի ձեւը

ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ
միջազգային փոխադրումներ իրականացնող
տրանսպորտային միջոցները մաքսային
կապարակնիքների և կնիքների կիրառմամբ
ապրանքների փոխադրման համար

APPROVAL CERTIFICATE
of a road vehicle for the transport of goods
under Customs seal

Հավաստագիր №.....
Certificate №

TIR Convention of 14 November 1975

Ում կողմից է տրամադրված՝.....
Issued by (իրավասու մարմնի անվանումը, երկիրը)

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի ձևը

(շարունակություն)

<p>ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ</p> <p>1. Գրանցման համարը</p> <p>2. Տրանսպորտային միջոցի տեսակը</p> <p>3. Ամբարձրանակի (եսուսի) համարը</p> <p>4. Ապրանքային նեյմը (պատրաստող գործարանի անվանումը)</p> <p>5. Այլ տվյալներ</p> <p>6. Հավելվածների քիվը</p>	<p align="center">Հավաստագիր №</p>												
<p>7. ԹՈՒՅՆԱՏՐՈՒՄ</p> <p><input type="checkbox"/> թույլատրում՝ անհատական կարգով՝</p> <p><input type="checkbox"/> թույլատրում՝ ըստ կառուցվածքի տեսակի՝</p> <p>Թույլտվություն № (համապատասխան դեպքերում).....</p>	<p align="center">Վավեր է մինչև</p> <div style="border: 1px solid black; padding: 5px; width: fit-content; margin: 10px auto;">Կնիքը</div>												
<p>8. Տիրապետող, (պատրաստող գործարան, սեփականատեր կամ օպերատոր) (միայն չգրանցված տրանսպորտային միջոցների համար)</p> <p>Անվանումը և հասցեն</p>													
<p>9. ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄ</p> <table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 33%; height: 20px;"></td> <td style="width: 33%; height: 20px;"></td> <td style="width: 33%; height: 20px;"></td> </tr> <tr> <td style="height: 20px;">Վավեր է մինչև</td> <td style="height: 20px;"></td> <td style="height: 20px;"></td> </tr> <tr> <td style="height: 20px;">Վայրը</td> <td style="height: 20px;"></td> <td style="height: 20px;"></td> </tr> <tr> <td style="height: 20px;">Ամսաթիվը</td> <td style="height: 20px;"></td> <td style="height: 20px;"></td> </tr> </table>					Վավեր է մինչև			Վայրը			Ամսաթիվը		
Վավեր է մինչև													
Վայրը													
Ամսաթիվը													
<p><small>՝Համապատասխան վանդակում դնել «x» նշանը</small></p>													
<p><small>Տե՛ս «Հրահանգչական ցուցումներ», էջ 4</small></p>													

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի ձևը

(շարունակություն)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ (լրացվում է իրավասու մարմինների կողմից)		Հավաստագիր №	
10. Նկատված անսարքությունները		11. Անսարքությունների վերացումը	
Իրավասու մարմինը	Կնիքը	Իրավասու մարմինը	Կնիքը
Ստորագրությունը		Ստորագրությունը	
10. Նկատված անսարքությունները		11. Անսարքությունների վերացումը	
Իրավասու մարմինը	Կնիքը	Իրավասու մարմինը	Կնիքը
Ստորագրությունը		Ստորագրությունը	
10. Նկատված անսարքությունները		11. Անսարքությունների վերացումը	
Իրավասու մարմինը	Կնիքը	Իրավասու մարմինը	Կնիքը
Ստորագրությունը		Ստորագրությունը	
12. Այլ նշումներ			

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի ձեւը (շարունակություն)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Թույլատրելու մասին հավաստագիր տրամադրած մաքսատան կողմից հարկ համարվելու դեպքում հավաստագրին կցվում են տվյալ մաքսատան կողմից վավերացված լուսանկարներ կամ նկարներ: Այդ դեպքում այդ փաստաթղթերի թիվը նշվում է հավաստագրի թիվ 6 վանդակում:

2. Հավաստագիրը պետք է ուղեկցի միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը

3. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ ստուգման և հավաստագրի գործողությունը վերականգնելու նպատակով ներկայացվում են այն մաքսատուն, որի գործունեության տարածքում գտնվում է (մշտական հիմունքներով բնակվում է) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների սեփականատերը կամ տիրապետողը

4. Եթե միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը այլևս չի համապատասխանում սահմանված տեխնիկական պահանջներին, ապա նախքան մաքսային կապարակնիքների և կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար այն օգտագործելը, միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը պետք է բերվի թույլատրման պայմանները բավարարող վիճակի

5. Եթե միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի հիմնական բնութագրերը փոփոխվել են, ապա միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցի թույլտվությունը կորցնում է ուժը և նախքան մաքսային կապարակնիքների և կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար այն օգտագործելը պահանջվում է տրամադրել նոր թույլտվություն

Հավելված 2

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի տրամադրման եւ օգտագործման կարգի

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը (բեռնարկղերը) մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի ձեւը

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները (բեռնարկղերը) մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման մասին

1. Հավաստագրի համարը

(նշվում են բեռնարկղը մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին ցուցանակի վրա նշվելիք թվերը եւ տառերը)

2. Հաստատվում է, որ ներքեւում նկարագրված տեսակի բեռնարկղը թույլատրված է փոխադրման համար, եւ որ այդ տեսակին համապատասխան պատրաստված բեռնարկղերը կարող են թույլատրվել մաքսային կապարակնիքների եւ կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար:

3. Բեռնարկղի տեսակը

4. Կառուցվածքի տեսակի տարբերակիչ թվերը կամ տառերը

5. Գծագրերի տարբերակիչ համարը

6. Նկարագրված կառուցվածքի տարբերակիչ համարը

7. Տարայի քաշը

8. Արտաքին չափսերը (սմ)

9. Կառուցվածքի հիմնական բնութագրերը (նյութերի տեսակը,
կառուցվածքի տեսակը եւ այլն)

.....

10. Սույն Հավաստագիրը վավեր է վերոնշյալ գծագրերին եւ կառուցվածքի նկարագրություններին համապատասխան պատրաստված բեռնարկղերի համար:

11. Տրված է

(այն պատրաստողի անվանումը եւ հասցեն, որին թույլատրվել է իր կողմից պատրաստված բեռնարկղերի վրա, որոնք ունեն թույլատրված տեսակի կառուցվածք, փակցնել թույլատրելու մասին ցուցանակ)

.....

(վայրը)

(ամսաթիվը)

.....

(հավաստագիր տրամադրող մաքսային մարմնի անվանումը)

.....

(մաքսային մարմնի ղեկավարի ստորագրությունը)

(Ա.Ա.Հ.)

Կ.Տ.

Ծանոթագրություններ.

1. Եթե բեռնարկղը չի համապատասխանում սահմանված տեխնիկական պահանջներին, ապա այն պետք է բերվի տեխնիկական այդ պահանջները բավարարող վիճակի՝ նախքան մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար դրա օգտագործումը:

2. Եթե բեռնարկղի հիմնակա ն բնութագրերը փոփոխվել են, ապա մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար այդ բեռնարկղի թույլտվությունը կորցնում է ուժը:

Հավելված 3

Միջազգային փոխադրում իրականացնող
տրանսպորտային միջոցը մաքսային կապարակների
ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման
համար թույլատրելու մասին հավաստագրի
տրամադրման եւ օգտագործման կարգի

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը (բեռնարկը)
մաքսային կապարակների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման
համար թույլատրելու մասին ցուցանակների ձեւը

200 մմ	
ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ Է ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ԵՎ ԿՆԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ APPROVED FOR TRANSPORT UNDER CUSTOMS SEAL	
*	**

ՏԵՍԱԿԸ	Գործարանային համարը
TYPE	MANUFACTURER'S No

200 մմ

ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ Է ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԻ ԵՎ ԿՆԻՔՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՄԲ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ

AGREE POUR LE TRANSPORT
SOUS SCHELLEMENT DOUANIER

100 մմ

*

**

ՏԵՍԱԿԸ Գործարանային համարը

TYPE No DE FABRICATION

Ծանոթագրություն:

* – այն երկրի անվանումը, որտեղ տրվել է թույլատրելու մասին հավաստագիրը,

** – թույլատրելու մասին հավաստագրի հերթական համարը,

*** – այն երկրի անվանումը՝ անգլերենով կամ ֆրանսերենով, որտեղ տրվել է թույլատրելու
մասին հավաստագիրը:

Հավելված 4

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի տրամադրման եւ օգտագործման կարգի

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը (բեռնարկղերը) մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի ձեւը

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

հաջորդ փուլում միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները (բեռնարկղերը) մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին

1. Հավաստագրի համարը
2. Հաստատվում է, որ ներքոնշյալ բեռնարկղը (բեռնարկղերը) թույլատրված է (թույլատրված են) մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար:
3. Բեռնարկղի (բեռնարկղերի) տեսակը
4. Պատրաստողի կողմից բեռնարկղերին տրված տարբերակիչ կամ գործարանային համարները
.....
.....
.....
5. Տարայի քաշը

6. Արտաքին չափսերը (սմ)

7. Կառուցվածքի հիմնական բնութագրերը (նյութերի տեսակը, կառուցվածքի տեսակը եւ այլն)

.....
.....

8. Տրված է

(այն պատրաստողի անվանումը եւ հասցեն, որին թույլատրվել է իր կողմից պատրաստված բեռնարկերի վրա, որոնք ունեն թույլատրված տեսակի կառուցվածք, փակցնել թույլատրելու մասին ցուցանակ)

.....

(վայրը)

(ամսաթիվը)

.....

(հավաստագիր տրամադրող մաքսային մարմնի անվանումը)

.....

(ստորագրությունը, կնիքը)

(Ա.Ա.Հ.)

Ծանոթագրություններ.

1. Եթե բեռնարկը չի համապատասխանում սահմանված տեխնիկական պահանջներին, ապա այն պետք է բերվի տեխնիկական այդ պահանջները բավարարող վիճակի՝ նախքան մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար դրա օգտագործումը:

2. Եթե բեռնարկի հիմնական բնութագրերը փոփոխվել են, ապա մաքսային կապարակնիքների, կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար այդ բեռնարկի թույլտվությունը կորցնում է ուժը: